ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 15.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/83

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն

Բողոք բերող՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ

Երրորդ անձ՝ «Իմպեքս» ՍՊԸ

ՀՀ պետական վերահսկողական ծառայություն

Մասնակցությամբ՝

ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացուցիչներ՝ Հ. Մելիքյանի, Ա. Նազարյանի,

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Կոստանյանի, Մ. Մկրտչյանի,

«Իմպեքս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Ա. Սահակյանի,

ՀՀ պետական վերահսկողական ծառայության ներկայացուցիչ՝ Տ. Սաֆարյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, բժշկական սարքերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն)

կողմից 15.09.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021 թվականին հայտարարված թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. դադարեցնել 06.09.2021 թվականի ժամը 14:30 տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությամբ կայացված 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» ՍՊ և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը բավարար գնահատելու մասին որոշումը, «Իմպեքս» ՍՊ ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, 10.09.2021 թվականին կայացված և հրապարակված 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը, և/կամ
2. ընդունել «Իմպեքս» ՍՊ և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը 2-րդ չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում, և/կամ
3. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊ ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 15.09.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի կողմից 15.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ ներկայացված բողոքը ընդունվել է վարույթ և տրվել թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 համարի ծածկագիրը:

28.09.2021թ.-ին՝ ներկայացված գրավոր միջնորդության հիման վրա «Իմպեքս» ՍՊԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

28.09.2021թ.-ին ներկայացված միջնորդության հիման վրա՝ Բողոքներ քննող անձի 28.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15763-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավվել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը:

28.09.2021թ.-ին, 07.10.2021թ.-ին և 15.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 07.10.2021թ.-ին և որոշման հրապարակման օր է նշանակվել 15.10.2021թ.-ին:

2. <u>«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն 15.09.2021թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կաբինետների համար բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021 թվականին հայտարարել է թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ ընթացակարգ):

Գնման ընթացակարգի հրավերով, մասնավորապես 2-րդ չափաբաժնով սահմանվել է հետևյալը. «Մանրէազերծման սարքը պետք է ունենա պաշտոնական համատեղելիություն՝ Karl Storz, Olympus, արտադրողների սարքերի և գործիքների հետ».

Գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի շրջանակում հայտ են ներկայացրել նաև «ԻՄՊԵՔՍ» ՍՊ, «ՎԵՐԻՏԱՍ» ՍՊ և «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունները:

Գնման ընթացակարգի մասնակից «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերությունը, նույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված հավելված N 1.1 նախատեսված նկարագրով որպես 2-րդ չափաբաժնի համար նախատեսված ապրանքի ապրանքային նշան գրել է ապրանքային նշան SHINVA, մակնիշ PS-100GXP, իսկ արտադրողի անվանում Shiva Medical Instrument Co., Ltd.:

Գնման ընթացակարգի մասնակից «ՎԵՐԻՏԱՍ» ՍՊ ընկերությունը, նույն գնման ընթացակարգի հրավերով սահմանված հավելված N 1.1 նախատեսված նկարագրով որպես 2-րդ չափաբաժնի համար նախատեսված ապրանքի ապրանքային նշան գրել է ապրանքային նշան SHINVA, մակնիշ PS-100GXP, իսկ արտադրողի անվանում Shiva Medical Instrument Co., Ltd.:

Այսինքն վերը նշված 2-րդ կազմակերպությունները նշել են ամբողջովին միևնույն ապրանքային նշանը, մակնիշը և արտադրողի անվանումը, ինչի իր մեջ արդեն իսկ պարունակում է որոշակի ռիսկեր:

Վերը նշված մասնակիցները իրենց կողմից ներկայացված ապրանքների տեխնիկական բնութագրերում ամբողջությամբ արտատպել են ՀՀ ՊՆ-ի կողմից գնման ընթացակարգի հրավերով սահմանված ապրանքի տեխնիկական բնութագրերը,

մասնավորապես, նշել են նաև հետևյալը. «Մանրէազերծման սարքը ունի պաշտոնական համատեղելիություն Karl Storz, Olympus արտադրողների սարքերի և գործիքների հետ»: Սակայն մասնակիցների կողմից գնման ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերը 06.09.2021 թվականի ժամը 14:30 տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությամբ գնահատվել են հրավերով նախատեսված պայմաններին այսինքն տեխնիկական բնութագրին բավարար, իսկ «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերությունը 2 չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Վերը նշված որոշման արդյունքում 2021-09-10 17:22:01-ից մինչեւ 2021-09-15 00:00:00 ժամը ներառյալ սահմանվել է անգործության ժամկետ, ինչից ելնելով «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը հենց այդ ժամանակահատվածում և որոշեց ներկայացնել բողոքը, ինչը նախաեսված է «Գնումների մասին» ՀՀ օրենքով:

Ներկայացված բողոքով «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը հայտնում է, որ գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժևի մասով «ԻՄՊԵՔՍ» ՍՊ և «ՎԵՐԻՏԱՍ» ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացվել են հրավերի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, ինչպես արդեն վերը նշվեց «ԻՄՊԵՔՍ» ՍՊ և «ՎԵՐԻՏԱՍ» ՍՊ ընկերություններ հրավերով սահմանված հավելված N 1.1 նախատեսված նկարագրով որպես 2 չափաբաժնի համար նախատեսված ապրանքի ապրանքային նշան գրել են ապրանքային նշան SHINVA, մակնիշ PS-100GXP, իսկ արտադրողի անվանում Shiva Medical Instrument Co., Ltd., ինչպես նաև նշել են, որ իրենց կողմից նշված արտադրող ընկերության Մանրէազերծման սարքը ունի պաշտոնական համատեղելիություն Karl Storz, Olympus արտադրողների սարքերի և գործիքների հետ:

Ի ապացույց նշվածի, գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն են ցանկանում հրավիրել Karl Storz և Olympus արտադրողների կողմից տրված գրություններին, առ այն, որ «ԻՄՊԵՔՍ» ՍՊ և «ՎԵՐԻՏԱՍ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված Shiva Medical Instrument Co ընկերության PS-100GXP մակնիշի SHINVA ապրանքային նշանով ապրանքը հակիրճ չունի պաշտոնական համատեղելիություն Karl Storz, Olympus արտադրողների սարքերի և գործիքների հետ:

ՀՀ պաշտպանության նախարարության «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը, համաձայն որի հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով

նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Խախտվել է նաև ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի թիվ 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 67-րդ կետը, համաձայն որի գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով, իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոնշյալ հոդվածների համադրման արդյունքում կարելի է եզրակացնել, որ եթե մասնակցի հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ապա գնահատող հանձնածողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը, որի արդյունքում եթե ապացուցվում է, որ իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն է ներկայացվել, ապա այդ մասնակցի հայտը պետք է մերժվի առանց շտկման հնարավորության:

Այսինքն, թե «ԻՄՊԵՔՍ» ՍՊ և թե «ՎԵՐԻՏԱՍ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված գնման ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին, ուրեմն և ենթակա են մերժման:

Մասնակիցների հայտերի մերժման արդյունքում կպահպանվի «ԻՆՏԵՐՄԵԴ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերության «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի նախատեսված գնման գործընթացին մասնակցելու սկզբունքները:»:

Ելնելով վերոգրյալից՝ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021 թվականին հայտարարված թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին.

1. դադարեցնել 06.09.2021 թվականի ժամը 14:30 տեղի ունեցած նիստի N 4 արձանագրությամբ կայացված 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» ՍՊ և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը բավարար գնահատելու մասին որոշումը, «Իմպեքս» ՍՊ

ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը, 10.09.2021 թվականին կայացված և հրապարակված 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին որոշումը, և/կամ

2. ընդունել «Իմպեքս» ՍՊ և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը 2-րդ չափաբաժնի մասով անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշում, և/կամ

3. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊ ընկերությանը 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշում:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 15.09.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/14967-2021 գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Պատվիրատուն 23.09.2021թ.-ին թիվ ՊՆ/ՊՆ/02/5053-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Ինտերմեդ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 բողոքը՝ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգ (այսուհետ՝ Ընթացակարգ): Ընթացակարգի 2-րդ չափաբաժնին հայտ են ներկայացրել «ԻՄՊԵՔՍ», «Վերիտաս» և «Ինտերմեդ Գրուպ» ՍՊ ընկերությունները: 10.09.2021թ.-ին՝ Ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, գնահատող հանձնաժողովի որոշմամբ վերը նշված մասնակիցների հայտերը գնահատվել են բավարար Ընթացակարգի հրավերի պահանջներին, իսկ «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերությունը՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, հայտարարվել է ընտրված մասնակից:

Ներկայացված բողոքով Բողոքաբերը հայտնել է, որ «ԻՄՊԵՔՍ» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջների խախտմամբ, մասնավորապես՝ վերջիններիս հայտերով ներկայացված N 1.1 հավելվածներում (առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրերում) նշված են՝ ապրանքային նշան՝ SHINVA, մակնիշ՝ PS-100GXP և արտադրողի անվանում՝ Shinva Medical Co., Ltd., ինչպես նաև նշված է, որ արտադրող ընկերության մանրէազերծման սարքն ունի պաշտոնական համատեղելիություն՝ Karl Storz, Olympus արտադրողների սարքերի և գործիքների հետ:

Ի ապացույց վերը նշվածի՝ Բողոքաբերը հղում է կատարել բողոքին կից ներկայացված՝ Karl Storz և Olympus արտադրողների կողմից տրված գրություններին՝ պնդելով, որ Shinva Medical Co. ընկերության PS-100GXP մակնիշի SHINVA ապրանքային նշանով ապրանքը չունի պաշտոնական համատեղելիություն Karl Storz, Olympus արտադրողների սարքերի և գործիքների հետ:

Ուսումնասիրելով վերը նշված կազմակերպությունների կողմից տրված գրությունները՝ կարելի է եզրակացնել, որ նշված արտադրողների սարքերի և գործիքների և Shinva Medical Co. ընկերության PS-100GXP մակնիշի SHINVA ապրանքային նշանով ապրանքի պաշտոնական համատեղելիության բացակայությունը պայմանավորված է միայն այն հանգամանքով, որ Karl Storz և Olympus ընկերությունները վերոնշյալ սարքերի և գործիքների համատեղելիության վերաբերյալ որևէ փորձարկում կամ հատազոտություն չեն իրականացվել, ինչը բնավ չի նշանակում, որ դրանք համատեղելի չեն կարող լինել:

Ուստի գտնում եմ, որ Բողոքաբերի որպես ապացույց ներկայացված փաստարկները չեն կարող հիմք հանդիսանալ այն պնդմանը, որ Ընտրված մասնակցի առաջարկվող ապրանքը համատեղելի չէ Karl Storz և Olympus արտադրողների սարքերի և գործիքների հետ:

Մյուս կողմից, Ընթացակարգի հրավերի 2-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում սահմանվել է պահանջ՝ որ մանրէազերծման սարքը պետք է ունենա պաշտոնական համատեղելիություն՝ Karl Storz, Olympus արտադրողների սարքերի ու գործիքների հետ և համատեղելիության վերաբերյալ պետք է նշում լինի Karl Storz, Olimpus մակնիշի սարքերի (գործիքների) կամ մանրէազերծող սարքի օգտագործման ձեռնարկներում (մեթոդական ցուցումներում) կամ համատեղելիությունը պետք է հավաստի մանրէազերծող սարքն արտադրողը կամ նրա պաշտոնական ներկայացուցիչը՝ իր կողմից

տրված երաշխիքային նամակով, իսկ պահանջվող փաստաթղթերի պատճենները ներկայացվում են ապրանքի մատակարարման ժամանակ:

Ձեռքբերվող սարքով անհրաժեշտ է լինելու մանրէազերծել ՀՀ ՋՈՒ ռազմաբժշկական վարչության ենթակայությամբ գործող բժշկական հաստատություններում առկա և օգտագործվող Karl Storz, Olympus արտադրողների կողմից արտադրված սարքերի բաղադրամասերն ու գործիքները, և վերոնշյալ պահանջի անհրաժեշտությունը պայմանավորված է մանրէազերծման ընթացքում վերջիններիս խափանվելուց խուսափելու հանգամանքով:

Հավելեմ նաև, որ վերը նշված պահանջը ներառվելու է նաև Ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրում և մատակարարի կողմից ապրանքի մատակարարման ժամանակ պահանջվող փաստաթղթերը չներկայացվելու դեպքում, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տվյալ ապրանքը չի ընդունվի և կձեռնարկվեն միջոցներ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պայմանագիրը միակողմանի լուծելու և մատակարարին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցանկում ներառելու ուղղությամբ:

Վերոգրյալից հետևում է, որ համատեղելիությունը կարող է հավաստվել նաև մանրէազերծող սարքի օգտագործման ձեռնարկներում (մեթոդական ցուցումներում) համապատասխան նշումի առկայությամբ, ինչպես նաև մանրէազերծող սարքն արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կողմից տրված երաշխիքային նամակով, որի պատճենը պետք է ներկայացվի ապրանքի մատակարարման ժամանակ, և այս դեպքում Karl Storz և Olimpus մակնիշի սարքերի (գործիքների) օգտագործման ձեռնարկներում համատեղելիության վերաբերյալ նշումը պարտադիր չէ:

Հարկ եմ համարում նշել, որ համատեղելության վերաբերյալ հավաստման վերոնշյալ տարբերակները տեխնիկական բնութագրում ներառվել են հնարավոր մասնակիցների շրջանակն ընդլայնելու համար: Հակառակ պարագայում՝ միայն Karl Storz և Olimpus մակնիշի սարքերի (գործիքների) օգտագործման ձեռնարկներում համատեղելիության վերաբերյալ նշումի պահանջը կդիտվեր խտրական:

«ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերության հայտով ներկայացված N 1.1 հավելվածում (առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում) նշված է, որ մանրէազերծման սարքը ունի պաշտոնական համատեղելիություն՝ Karl Storz, Olympus, արտադրողների սարքերի և գործիքների հետ: Համատեղելիության վերաբերյալ առկա է նշում մանրէազերծող սարքի օգտագործման ձեռնարկում, ինչպես նաև համատեղելիությունը

կհավաստվի մանրէազերծող սարքի արտադրողը կամ նրա պաշտոնական ներկայացուցիչը՝ իր կողմից տրված երաշխիքային նամակով:

«Վերիտաս» ՍՊ ընկերության հայտով ներկայացված N 1.1 հավելվածում (առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրում) նշված է, որ «Մանրէազերծման սարքը պետք է ունենա պաշտոնական համատեղելիություն Karl Storz, Olympus, արտադրողների սարքերի և գործիքների հետ:

Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով ներկայացված հայտերի համապատասխանությունը Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, կայացրել է որոշում «ԻՄՊԵՔՍ» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների հայտերը բավարար գնահատելու, իսկ գնային առաջարկները գնահատելու արդյունքում՝ «ԻՄՊԵՔՍ» ՍՊ ընկերությանը Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ:

Բողոքաբերի մատնանշված փաստի վերաբերյալ, որ «ԻՄՊԵՔՍ» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների կողմից Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով միևնույն արտադրողի միևնույն ապրաքատեսակի առաջարկություններն արդեն իսկ պարունակում են որոշակի ռիսկեր, գտնում եմ, որ հաշվի առնելով «ԻՄՊԵՔՍ» և «Վերիտաս» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերում իրական շահառուների մասին առկա տեղեկատվությունը (տարբեր անձինք են), խոսում է հակառակի մասին, և պրակտիկայում հաճախ է հանդիպում միևնույն գնման ընթացակարգին տարբեր մասնակիցների կողմից նույն ապրանքի առաջարկություններ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հայտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը Բողոքաբերի մատնանշած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները չի խախտել, քանի որ ներկայացված հայտերը գնահատվել են Ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին, իսկ վերջինիս ներկայացված փաստարկները հիմնազուրկ են:

Ինչ վերաբերում է Բողոքաբերի այն պնդմանը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 67-րդ կետի պահանջները, ապա հայտնում եմ հետևյալը.

Հիշյալ կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա

մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում միայն պետք է կիրառի նշված կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ պատճառաբանված ոչման հիման վրա:

Քանի որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ներկայացված հայտերում նշված տվյալների իսկության վերաբերյալ որևէ կասկած չի ունեցել (գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրություններում դրա վերաբերյալ որևէ նշում առկա չէ) և վերոնշյալ դրույթի պահանջները կիրառելու վերաբերյալ որևէ պատճառաբանված որոշում չի եղել, ուստի գտնում եմ, որ գնահատող հանձնաժողովը առանց հիմնավոր պատճառի չէր կարող կիրառել տվյալ դրույթը:

Ուստի Բողոքաբերի այն պնդումը, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը խախտել է վերը նշված կարգի 67-րդ կետի պահանջները ևս հիմնազուրկ են:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ առաջարկում եմ ներկայացված բողոքը ամբողջությամբ մերժել՝ անհիմն լինելու պատճառով:

Կից ներկայացնում եմ Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերը:»:

3. <u>Երրորդ անձ՝ «Իմպեքս» ՍՊԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Իմպեքս» ՍՊԸ-ն 28.09.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին և ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-

9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պահանջներին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

4. <u>Բողոքարկման ընթացակարգի կողմ՝ ՀՀ պետական վերահսկողական ծառայության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը.</u>

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Ընկերության 28.09.2021թ.-ի միջնորդության հիման վրա, Բողոքներ քննող անձի 28.09.2021թ.-ի թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/15763-2021 գրությամբ՝ բողոքարկման ընթացակարգում որպես կողմ է ներգրավել ՀՀ պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ նաև՝ Ծառայություն):

Ծառայությունը, պատշաճ ծանուցված լինելով կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պահանջներին, բողոքով ներկայացված իրավական և փաստական հանգամանքներին:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցի (այսուհետ նաև՝ Հավելված 1) համաձայն՝ գնման առարկա է հանդիսանում 1 հատ քանակով «Մանրէազերծող սարք» ապրանքատեսակը և որպես գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիր՝ ԳՄԱ դասակարգման (CPV) կոդ նշվել է՝ 33191100/2:

iii. Հավելված 1-ով 2-րդ չափաբաժնի մասով սահմանվել է, որ «մանրէազերծման սարքը» պետք է ունենա պաշտոնական համատեղելիություն՝ Karl Storz, Olympus,

արտադրողների սարքերի և գործիքների հետ. Մասնավորապես՝ համատեղելիության վերաբերյալ պետք է նշում լինի Karl Storz և Olimpus մակնիշի սարքերի (գործիքների) կամ մանրէազերծող սարքի օգտագործման ձեռնարկներում (մեթոդական ցուցումներում) կամ համատեղելիությունը պետք է հավաստի մանրէազերծող սարքն արտադրողը կամ նրա պաշտոնական ներկայացուցիչը՝ իր կողմից տրված երաշխիքային նամակով:

iv. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ են ներկայացրել «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ն, «Իմպեքս» ՍՊԸ-ն և «Վերիտաս» ՍՊԸ-ն:

v. «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է «Shiva Medical Instrument Co.» ընկերության SHINVA ապրանքային նշանի PS-100GXP մակնիշի ապրանքատեսակը:

vi. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 06.09.2021թ.-ի թիվ 4 արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ 10.09.2021թ.-ին հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել՝ «Իմպեքս» ՍՊԸ-ին:

vii. Նույն արձանագրության համաձայն՝ գնահատող հանձնաժողովը որոշել է հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները, հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Ինչպես նաև գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

viii. «Karl Storz» և «Olympus» արտադրողների կողմից տրված գրություններին համաձայն՝ «Shinva Medical Co.» ընկերության PS-100GXP մակնիշի SHINVA ապրանքային նշանով ապրանքը չունի պաշտոնական համատեղելիություն «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ:

ix. «Shinva Medical Co.» արտադրող ընկերության կողմից տրված գրության համաձայն՝ «Shinva Medical Co.» ընկերության ապրանքը համատեղելի է «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման մասնակիորեն, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին

մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ

հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է

մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետն ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով 2-րդ չափաբաժնի մասով սահմանվել է, որ մանրէազերծման սարքը պետք է ունենա պաշտոնական համատեղելիություն՝ Karl Storz, Olympus, արտադրողների սարքերի և գործիքների հետ. Մասնավորապես՝ համատեղելիության վերաբերյալ պետք է նշում լինի Karl Storz և Olimpus մակնիշի սարքերի (գործիքների) կամ մանրէազերծող սարքի օգտագործման ձեռնարկներում (մեթոդական ցուցումներում) կամ համատեղելիությունը պետք է հավաստի

մանրէազերծող սարքն արտադրողը կամ նրա պաշտոնական ներկայացուցիչը՝ իր կողմից տրված երաշխիքային նամակով: Ընթացակարգին մասնակցելու նպատակով 2-րդ չափաբաժնի մասով հայտ ներկայացրած «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ի՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվել է «Shiva Medical Instrument Co.» ընկերության SHINVA ապրանքային նշանի PS-100GXP մակնիշի ապրանքատեսակը: Հանձնաժողովի 06.09.2021թ.-ի թիվ 4 արձանագրության 4-րդ կետով արձանագրվել է, որ 10.09.2021թ.-ին հայտերի բացման և գնահատման նիստի ավարտի օրը, Armeps (www.armeps.am) համակարգում էլեկտրոնային գնահատման արդյունքում, գնահատող հանձնաժողովը որոշել է ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարար գնահատված մասնակիցներից 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել՝ «Իմպեքս» ՍՊԸ-ին: Այնուհետև Հանձնաժողովը որոշել է հրապարակել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի արդյունքները, հաստատել «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել այն: Ինչպես նաև գնահատող հանձնաժողովը որոշել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով ընթացակարգի ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածների պահանջները:

«Karl Storz» և «Olympus» արտադրողների կողմից տրված գրություններին համաձայն՝ «Shinva Medical Co.» ընկերության PS-100GXP մակնիշի SHINVA ապրանքային նշանով ապրանքը չունի պաշտոնական համատեղելիություն «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ: «Shinva Medical Co.» արտադրող ընկերության կողմից տրված գրության համաձայն՝ «Shinva Medical Co.» ընկերության ապրանքը համատեղելի է «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, ուսումնասիրելով գնման ընթացակարգի հրավերով նախատեսված տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցը, «Karl Storz», «Olympus» և «Shinva Medical Co.» արտադրողների կողմից տրված գրությունները՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ներկայացված փաստական հանգամանքների միջև առկա

են հակասություններ. Մասնավորապես՝ մի դեպքում «Karl Storz» և «Olympus» արտադրողների կողմից տրված գրությունների հիման վրա արձանագրվում է, որ «Shinva Medical Co.» ընկերության PS-100GXP մակնիշի SHINVA ապրանքային նշանով ապրանքը չունի պաշտոնական համատեղելիություն «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ, մյուս դեպքում՝ «Shinva Medical Co.» արտադրող ընկերությունը փաստում է, որ վերջինիս արտադրանքը համատեղելի է «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից պետք է կիրառվի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար մասնակիցների ներկայացրած տվյալների իսկությունը, հետևյալ պատճառաբանությամբ.

Կարգի 67-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը կարող է պատճառաբանված որոշման դեպքում ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Հրավերի 8.21-րդ կետի համաձայն՝ մասնակիցն իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով կարող է ներկայացնել լրացուցիչ այլ փաստաթղթեր, տեղեկություններ և նյութեր: Հանձնաժողովը կարող է ստուգել մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը՝ օգտագործելով պաշտոնական աղբյուրներից ստացված տվյալներ կամ դրա մասին ստանալով իրավասու մարմինների գրավոր եզրակացությունը: Նման հարցում ուղարկվելու դեպքում համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում են գրավոր եզրակացություն: Եթե մասնակցի ներկայացրած տվյալների իսկության ստուգման արդյունքում տվյալները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է:

Վերոգրյալ իրավանորմերի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով (Հրավերի 8.21) սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանը, նախկին որոշումներում անդրադառնալով պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված հայեցողական լիազորությունների իրացման խնդրին, արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, վերջինիս գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված 27.11.2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Վերոգրյալի հիման վրա ՀՀ վճռաբեկ դատարանը կարևորել է «հայեցողություն» կատեգորիայի իրավական բովանդակության բացահայտման անհրաժեշտությունը: Ըստ ՀՀ վճռաբեկ դատարանի՝ «հայեցողությունը» թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրության կամ դրսևորման հնարավորությունն է: Որպես ուղենիշ հիմք ընդունելով իրավունքի գերակայության սկզբունքը, մարդու և քաղաքացու՝ ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության գաղափարը՝ ՀՀ վճռաբեկ դատարանը գտել է, որ «հայեցողություն» եզրույթի ներքո պետք է նկատի ունենալ նպատակահարմարության և օրինականության ողջամիտ հարաբերակցություն: Այսինքն՝ պետաիշխանական լիազորություններով օժտված որևէ պետական մարմին հայեցողական լիազորություն իրականացնելիս պարտավոր է թույլատրելի իրավաչափ վարքագծի ընտրությունն իրականացնել՝ առաջնորդվելով մարդու և քաղաքացու՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ, նրանց իրավահավասարության, կամայականության արգելքի սկզբունքներով՝ ապահովելով գործի ըստ էության ճիշտ քննությունը և լուծումը *(տե՛ս, օրինակ, ՀՀ ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչությունն ընդդեմ անհատ ձեռնարկատեր*

Գուրգեն Այվազյանի և այլոց թիվ ԵՇԴ/3780/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):

Վերոգրյալ իրավական դիրքորոշման համատեքստում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Կարգի 67-րդ կետով ամրագրված գնահատող հանձնաժողովի հայեցողական լիազորության հասկացությունից հետևում է, որ.

1) հայեցողական լիազորությունը պետք է հանձնաժողովին (պատվիրատուին) վերապահված լինի օրենքով,

2) հայեցողական լիազորությունը հանգում է մի քանի լուծումներից մեկն ընտրելու և այն իրացնելու՝ հանձնաժողովի (պատվիրատուի) հնարավորությանը,

3) հանձնաժողովի (պատվիրատուի) կողմից ընտրվող և իրացվող բոլոր լուծումները պետք է լինեն իրավաչափ. վերջինս չի կարող ընտրել որևէ լուծում, որը դուրս է հայեցողական լիազորությունների՝ օրենքով սահմանված շրջանակներից և ուղղված չէ օրենքով հետապնդվող նպատակներին:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ գնահատող հանձնաժողովը գնման ընթացակարգին մասնակցության հայտ ներկայացրած մասնակիցների կողմից ներկայացված տվյալների իսկության վերաբերյալ կասկածներ ունենալու դեպքում, պետք է կիրառի Կարգի 67-րդ կետով սահմանված դրույթները՝ պարզելու համար յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած տվյալների իսկությունը: Սույն դեպքում Կարգի 41-րդ և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները կիրառելի չեն, այն պարզ փաստի հաշվառմամբ, որ նշված նորմերի կիրառումը վերաբերում է մասնակցի հայտում՝ հրավերի պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանություններին:

Տվյալ դեպքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Հանձնաժողովը, ելնելով սույն գործի քննության ընթացքում պարզված և հաստատված փաստական տվյալներից, պետք է կիրառի Կարգի 67-րդ և Հրավերի 8.21-րդ կետերով սահմանված դրույթները և մասնակիցների կողմից հայտով ներկայացված հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով առաջարկվող ապրանքատեսակների «Karl Storz» և «Olympus» արտադրողների սարքերի և գործիքների հետ պաշտոնական համատեղելիության հանգամանքի իսկությունը ստուգելու համար հարցում ներկայացնի «Karl Storz» և «Olympus» արտադրողներին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ Ընկերության կողմից ներկայացված՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.09.2021թ.-ի թիվ 4 արձանագրությամբ 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի հայտերը բավարար գնահատելու, «Իմպեքս» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու, 10.09.2021թ.-ին կայացված և հրապարակված 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները դադարեցնելու պահանջների մասին բողոքը հիմնավոր է և ենթակա բավարարման:

Անդրադառնալով բողոքի՝ «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի հայտերը 2-րդ չափաբաժնի մասով անբավարար գնահատելուն և մերժելուն, «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելուն պարտավորեցնելու մասին ներկայացված պահանջներին, Բողոքներ քննող անձը գտնում է, որ այն անհիմն է, այն փաստի հաշվառմամբ, որ «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի, «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի հայտերը 2-րդ չափաբաժնի մասով կարող են անբավարար գնահատվել ու մերժվել Օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով սահմանված կանոնների հիման վրա. Մասնավորապես՝ Հանձնաժողովի կողմից դեռ պետք է կիրառվի Կարգի 67-րդ և Հրավերի 8.21-րդ կետերի դրույթները, որից հետո իրականացվի «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի, «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա փաստաթղթերի ամբողջական ու լիարժեք ուսումնասիրություն՝ գնահատում, հրավերով սահմանված պահանջներին համապատասխան, որն Օրենքի 26-րդ հոդվածի հիման վրա իրականացնում է գնահատող հանձնաժողովը: Այդ գնահատման արդյունքում է հնարավոր փաստել յուրաքանչյուր մասնակցի՝ որպես հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակցի հանգամանքը, որից հետո նոր միայն Հանձնաժողովն իրավասու է հայտը բավարար գնահատված որևէ մասնակցի հայտարարել ընտրված մասնակից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ինտերմեդ Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 15.09.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/83 ծածկագրով բողոքը բավարարել մասնակիորեն:

2. Պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության բժշկական սարքերի ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված թիվ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/31» գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 06.09.2021թ.-ի ժամը 14:30-ին տեղի ունեցած նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված 2-րդ չափաբաժնի մասով «Իմպեքս» ՍՊԸ-ի և «Վերիտաս» ՍՊԸ-ի հայտերը բավարար գնահատելու, «Իմպեքս» ՍՊԸ-ին 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչելու, 10.09.2021թ.-ին կայացված և հրապարակված 2-րդ չափաբաժնի մասով պայմանագիր կնքելու մասին կայացված որոշումները

3. Մնացած մասով բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**